

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«----» ----- 2025թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն նշանավոր աստղաֆիզիկոս, խորհրդային աստղագիտության հիմնադիր Գրիգոր Գուրզադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի հ.33 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրիգոր Գուրգադյանը ծնվել է 1929թ., Իրաքի մայրաքաղաք Բաղդադում:

1944 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրոտեխնիկական և շինարարական ֆակուլտետները: Նույն տարի ընդունվել է ասպիրանտուրա:

1948 թվականին Վիկտոր Համբարձումյանի ղեկավարությամբ, 26 տարեկան հասակում, Մոսկվայի պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական թեզը «Միջաստղային գազային նյութի ճառագայթային հավասարակշռությունը» թեմայով: Վ. Համբարձումյանի հետ երկար տարիներ աշխատել է Բյուրականի աստղադիտարանում:

1955 թվականին Լենինգրադի պետական համալսարանում պաշտպանել է դոկտորական թեզը: 1950-1966 թվականներին ղեկավարել է ԲԱ աստղերի և միգամածությունների ֆիզիկայի բաժինը: 1967-1973 թվականներին՝ տիեզերական հետազոտությունների մասնաճյուղը:

1973-1978 թվականներին ղեկավարել է Գառնիի աստղագիտության լաբորատորիան:

1978-1992 թվականներին եղել է ԲԱ արտամթնոլորտային աստղագիտության լաբորատորիայի վարիչ, 1979 թվականից՝ ԵրՊԻ տիեզերական սարքաշինության ամբիոնի վարիչ: 1992-2004 թվականներին՝ Գառնիի տիեզերական աստղագիտության ինստիտուտի տնօրեն:

1962 թվականին արժանացել է պրոֆեսորի կոչման:

1965 թվականին ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ: 1986 թվականին՝ ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ:

Հրատարակել է ավելի քան 200 գիտական հոդված և մեկ տասնյակ սովորաձավալ մենագրություններ՝ նվիրված աստղաֆիզիկայի հիմնախնդիրներին: Ուսումնասիրել է մոլորակաձև միգամածությունների ֆիզիկան և դինամիկան՝ դեռևս 1960-ականներին կանխատեսել է մագնիսական դաշտի դերը միգամածություններում, ստեղծել աստղերի բնկման տեսություն՝ հիմնված նրանցում ընթացող ոչ ջերմային երևույթների վրա:

Գուրգադյանը տիեզերական աստղագիտության առաջնեկներից է: Նա ստեղծել է մի շարք գիտական սարքեր ու օպտիկական համակարգեր: Նրա անվան հետ է կապված «Օրիոն» տիեզերական աստղադիտարանի օպտիկական համակարգի աշխատանքի սկզբունքի, ավտոմատ կառավարման մեթոդիկայի ստեղծումը:

Նրա ղեկավարությամբ Գառնիի տիեզերական աստղագիտության լաբորատորիայում իրենց նախաթռիչքային պատրաստումն են անցել ավելի քան 40

խորհրդային տիեզերագնացներ: Նա դասախոսել է Երևանի պետական համալսարանում (1948-1978), Պոլիտեխնիկական ինստիտուտում հիմնադրել (1978) և ղեկավարել է ճշգրիտ սարքաշինության ամբիոնը:

Գուրզադյանի ստեղծագործական ժառանգությանն են պատկանում նաև բազմաթիվ կտավներ, փիլիսոփայական էսսեների գրքեր՝ նվիրված գիտությանը, արվեստին, ճարտարապետությանը:

2001 թվականին Գառնիում բացված, ապա 2015 թվականին Երևանում վերաբացված Տիեզերքի թանգարանում ներկայացված են տիեզերական հետազոտությունների վաղ շրջանի բացառիկ ցուցանմուշներ:

2019 թվականի մարտի 19-ին Երևանի պետական համալսարանի մուտքի ճեմասրահում հաղիսավոր բացվել է Գուրզադյանի կիսանդրին:

1975 թվականին Գրիգոր Գուրզադյանն արժանացել է ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչմանը: Սուրբ Մեսրոպ Մաշտոցի (2011) և «Պատվո նշան» շքանշանների դափնեկիր է:

Գրիգոր Գուրզադյանը մահացել է 2014 թվականին, Երևանում:

Գրիգոր Գուրզադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի հ.33 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է Գրիգոր Գուրզադյանի ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ